ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

26.06.2025թ.

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի «ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՊԱՏ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂ. ՏՈՒՆ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԼԱՎԻԿ ԱՐՏԵՄԻ ԽՈՋԱՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 408-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և 27.04.2010 թվականի N 50-Ն՝ «Իրավունքը հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, ՀՀ 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-րդ հոդվածով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 2010 թվականի ապրիլի 27-ի N 50-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 7-ի թիվ 719-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի Բարեպատ գյուղի 5-րդ փողոց տուն 1 հասցեում գտնվող շենք-շինության կառուցման և սպասարկման համար հատկացված 0.197հա հողամասին կից 0.00007հա հողամասը իրեն տրամադրելու և մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սլավիկ Խոջայանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բավարարում է Հայաստանի Հանրապետության ՀՕ-117 ընդունված 10.06.2008թ., 27.04.2010թ. թիվ 50-Ն որոշմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների և ՀՀ ՀՕ 64 հոդվածի 1-ին կետի պահանջներին:
2. Սլավիկ Արտեմի Խոջայանին՝ ծնված 31.03.1955թ., սեփականության իրավունքով հատկացվել է 0.197 հա տնամերձ հողամաս, սակայն փաստացի օգտագործվում է 0.19707 հա: Հողամասի վրա 1983 թվականին կառուցված մեկ

հարկանի 39.71քմ ներքին մակերեսով բնակելի տունը, 1989 թվականին կառուցված 35.34քմ ներքին մակերեսով անասնաշենքը, որոնք կառուցված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ՝ 26.12.2002 թվականին ՀՀ ՀՕ 510-Ն փաստացի տիրապետման իրավունքով ճանաչել Սլավիկ Արտեմի Խոջայանի սեփական գույք:

3. Համայնքի կողմից Սլավիկ Խոջայանին սեփականության իրավունքով հատկացված 0.19707 հա հողամասը չի գտնվում ՀՕ 60-րդ հոդվածի ցանկում և բավարարում է ՀՕ 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին:
4. Անվավեր ճանաչել համայնքի կողմից 20.05.2025 թվականին տրված թիվ 360-Ա որաշումը:
5. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Աշխատակազմի քարտուղար՝